Օտարի օգնութիւնից մեզ շահ չկայ: Դժբա՛խտ է այն ազգը եւ մի՛շտ դժբախտ կը մնայ, որ օտարի օգնութեանը կարօտ կը լինի: Ոչ ոք իր հօր հոգու համար մեզ չի օգնիլ. նա պէտք է տասը բան առնէ մեզանից, որ մի բան տայ: «ողորմութիւն խնդրողի երեսը միշտ սեւ կը լինի եւ քսակը դատարկ»: Մարդ պէտք է իր սեփական աշխատութեամբ եւ իր ուժովը ոտքի կանգնէ: Օտարի օգնութիւնը նման է մի նեցուկի, որը հէնց որ ետ քաշեցիր, կը տեսնես, դարձեալ ցած կընկնի նրա վրայ յենուած առարկան...

Մեր գլխաւոր օգնականն է մեր երկրի բնութիւնը-նրայ տեղագրական դիրքը: Վան-տոսպը իր անմատչելի լեռներով, իր անդնդախոր ձորերով եւ իր նեղ փապարներով մի հսկայական ամրոց է. այստեղ շատ դժուարութեամբ կարող է մուտք գործել օտար եւ ինքնակոչ հիւրը: Այստեղ շատ անգամ հռոմայեցիք, յոյները, պարսիկները, մարերը եւ արաբացիք կորցրել են իրանց լեգէոնները: Վանայ նահանգը բնութիւնից պատրաստուած է հայերի համար ազատ կեցութեան կենտրոն լինել: Նա իր չօրէք կողմում ունի այնպիսի գաւառներ, որոնք մինչեւ այսօր շատ խիտ բնակեցրած են հայերով: Հիւսիսից բռնած է Արզրումի ընդարձակ նահանգը Կարսի, Բայազեդի եւ Մագոի գաւառներով: Հարաւից՝ Դիարբեքիրի նահանգը Սասնոյ եւ Մոգաց գաւառներով: Արեւմուտքից տարածւում է ընդարձակ Տարօնը՝ Բաղէշի եւ Մուշի գաւառներով: Արեւելքից՝ Խոյի, Սալմաստի, Ուրմիայի եւ Ռաւանդուզի գաւառները:

Բացի յիշեալ նահանգներից եւ գաւառներից, որոնք շրջապատում են Վան-Տոսպը, մենք հարաւ-արեւելեան կողմում ունենք մի լաւ դրացի-լեռնային Զօլամէրիկը, որ իր վայրենի դրութեամբ կարող է Հայաստանի Դաղստանը համարոել: Այս երկիրը, որ մեր հին Տմորիք կամ Կորդիք գաւառն է, այժմ բնակեցրած է ասորիների ջոլոյ կոչուած ցեղով, որոնք նեստորական քրիստոնեաներ են: Զօլօն մի քաջազնական ժողովուրդ է, որ սկսեալ անյիշելի ժամանակներից, Զօլամէրկի լեռներում պահպանել է իր անկախութիւնը: Քրդի եւ թուրքի իշխանութիւնը մինչեւ այսօր այնտեղ մուտք չէ գործել: Բայց ի՞նչ է պատճառը: Զօլօները թոով այստեղի հայերից շատ փոքր են. նրանց իւը հազիւ թէ 50 հազարի է հասնում, կնշանակէ Վանայ նահանգի հայ ազգաբնակութեան ութերորդ մասը: Ուրեմն ի՞նչ է պատճառը, որ նրանք ազատ են:

Զօլօները բոլորը զինորոած մարդիկ են. նրանց կանայք, աղջիկներն մինչեւ անգամ զէնք են կրում: Նրանք հասկացել են, թէ առանց սրի մեր դարում չի կարելի գլուխ պահել: Հրեշտակները միայն չեն կրում, որովհետեւ